Luys Lույս®

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԻՆԴԵՔՍ – 2021

Հաշվետվություն «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» միջազգային կազմակերպության կողմից հրապարակված զեկույցի (2021թ.) հիման վրա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 1

1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 2

2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ 5

3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 6

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ 7

ԱՄՓՈՓՈՒՄ 12

ՆԱԽԱԲԱՆ

Կոռուպցիան այսօր ամբողջ աշխարհում պետությունների զարգացման և առաջընթացի լրջագույն խնդիրներից մեկն է, որն իր բացասական ազդեցությունն է գործում կյանքի տարբեր ուղղություններով՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական, մշակութային և այլն: Ակադեմիական շրջանակներում հաճախ բարձրաձայնվում են կոռուպցիայի հետ ասոցացվող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են տնտեսական կորուստները, աղքատության ու անհավասարության խորացումը, հանրային (պետական) հատվածի գործառութային անարդյունավետությունները, անպատժելիության մթնոլորտը և ընտրովի արդարադատության իրականացումը, մարդու իրավունքների ոտնահարումները, ժողովրդավարական այլ ինստիտուտների արդյունավետ գործարկման խոչընդոտները և այլն:

Մյուս կողմից, քանի որ կոռուպցիան և դրա տարատեսակ դրսևորումները բացասաբար են ազդում ոչ միայն առանձին պետությունների, այլև ամբողջ աշխարհի զարգացման գործընթացի վրա՝ կոռուպցիան չափելու և գնահատելու խնդիրն այսօր տարբեր միջազգային կազմակերպությունների կարևոր օրակարգային հարցերից մեկն է դարձել: Այս համատեքստում հատկանշական է «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» միջազգային կազմակերպության կողմից 1995 թվականից ի վեր հրապարակվող «Կոռուպցիայի ընկալման ինդեքս» ամենամյա զեկույցների շարքը, որը պետական հատվածում առկա կոռուպցիայի գնահատման հեղինակավոր հետազոտական աշխատանքների թվին է դասվում: Ինդեքսը թույլ է տալիս պատկերացնել ինչպես աշխարհում, այնպես էլ առանձին վերցրած պետություններում կոռուպցիայի հարաբերական աստիճանը՝ իրականացնելով միջժամանակային և միջերկրային համեմատականներ ու վերլուծություններ:

«Կոռուպցիայի ընկալման ինդեքս - 2021» զեկույցում[1] ներառված են աշխարհի 180 երկրներ, որոնց թվում է նաև Հայաստանը: Համաձայն զեկույցի՝ ԿՈՎԻԴ-19 համավարակի տարածումից 2 տարի անց կոռուպցիան խորացել է ամբողջ աշխարհում, ինչն էլ արտացոլված է այս տարվա ինդեքսի գնահատականներում: Այսպես, չնայած ստանձնած հանձնառություններին՝ աշխարհի 131 երկրում վերջին տասնամյակում պետական հատվածում առկա կոռուպցիայի դեմ պայքարի գործում զգալի առաջընթաց չի գրանցվել, իսկ 2021-ին ինդեքսի գնահատականներով 27 երկիր գրանցել է պատմական նվազագույն արդյունքներ: Միևնույն ժամանակ, զեկույցում նշվում է, որ մարդու իրավունքները և

[1] Զեկույցը հասանելի է հետևյալ հղումով՝ https://www.transparency.org/en/cpi/2021:

ժողովրդավարությունն ամբողջ աշխարհում այժմ ենթարկվում են լրջագույն փորձությունների:

Հաշվի առնելով վերոգրյալ իրողությունները և դրանց անդրադառնալու կարևորությունը, «Լույս» հիմնադրամը շարունակում է Կոռուպցիայի ընկալման ինդեքսի վերլուծությունների շարքը[2]: Այսպես, սույն վերլուծության առաջին գլխում հակիրճ տրվել է ինդեքսի հիմնական նկարագրությունը և անդրադարձ է կատարվել դրա հաշվարկման մեթոդաբանությանը: Երկրորդ գլխում մեջբերվել են համաշխարհային կտրվածքով ինդեքսի առավել ուշագրավ գնահատականները: Երրորդ գլխում վերլուծվել է կոռուպցիայի հարաբերական աստիճանը Հայաստանում, իսկ չորրորդ գլխում ներկայացվել են տարածաշրջանային համադրումներն ու Հայաստանի դիրքը վարկանիշային աղյուսակներում: Այնուհետև ներկայացվել է վերլուծության ամփոփումը:

1. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կոռուպցիայի ընկալման ինդեքսը (ԿԸԻ) թույլ է տալիս գնահատել երկրի պետական հատվածի կոռումպացվածության աստիճանը՝ հիմնվելով երկրում կոռուպցիայի ընկալումների վերաբերյալ փորձագետների և գործարարների տված գնահատականների վրա: Հաշվի առնելով կոռուպցիայի չափելիության օբյեկտիվ և սուբյեկտիվ բարդությունները՝ Թրանսփարենսի Ինթերնեյշնլի կողմից մշակվել է ինդեքսի հաշվարկման այնպիսի մեթոդաբանություն, որը թույլ է տալիս հնարավորինս նվազեցնել գնահատման սխալանքի չափը: Ավելին, սկսած 2012 թվականից, Թրանսփարենսի Ինթերնեյշնլը վերանայել է ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունն այնպես, որպեսզի հնարավոր լինի կոռուպցիայի ընկալման համատեքստում իրականացնել ինչպես միջերկրային, այնպես էլ միջժամանակային համեմատություններ:

Այսպես, ԿԸԻ-ն ընդունում է արժեքներ 0-ից 100 միջակայքում, և միավորներն աճման կարգով ասոցացվում են պետական հատվածի՝ կոռուպցիայից զերծ լինելու ավելի բարձր մակարդակի հետ: Ինդեքսը հաշվարկվում է հետևյալ քայլերի տրամաբանությամբ:

ա) Ընտրվում են տվյալների աղբյուրները: Ընդ որում, դրանք ներառում են տեղեկատվություն կոռուպցիայի այնպիսի դրսևորումների վերաբերյալ, ինչպիսիք

[2] «Լույս» հիմնադրամի կողմից Կոռուպցիայի ընկալման ինդեքսի վերաբերյալ իրականացված նախորդ վերլուծություններին կարելի է ծանոթանալ հետևյալ հղումներով՝
- «Կոռուպցիայի ընկալման ինդեքս 2018»՝ https://bit.ly/3s8NzFg,
- «Կոռուպցիայի ընկալման ինդեքս 2019»՝ https://bit.ly/3gmsUry,
- «Կոռուպցիայի ընկալման ինդեքս 2020»՝ https://bit.ly/3stcxiX:

են կաշառակերությունը, հանրային միջոցների մսխումը, բյուրոկրատական քաշքշուկը և ավելորդ ընթացակարգերը, որոնք կարող են մեծացնել կոռուպցիոն դրսևորումների քանակը, հանրային ոլորտում կոռուպցիան սահմանափակելու և բարեվարքության արդյունավետ մեխանիզմներ ներդնելու՝ իշխանությունների ունակությունը և այլն[3]:

ԿԸԻ 2021-ը հաշվարկվել է՝ օգտագործելով տվյալների 13 տարբեր աղբյուրներ 12 տարբեր հաստատություններից, որոնք արտացոլում են վերջին երկու տարիներին պետական հատվածում առկա կոռուպցիայի ընկալումները: Այդ 13 աղբյուրներն են[4]՝

- **AFDB** – Աֆրիկյան զարգացման բանկ, «Երկրի հանրային քաղաքականության և ինստիտուցիոնալ համակարգի գնահատում - 2020» (African Development Bank Country Policy and Institutional Assessment 2020),
- **BF** – Բերթելսմանի հիմնադրամ, «Կայուն կառավարման ցուցանիշներ - 2020» (Bertelsmann Stiftung Sustainable Governance Indicators 2020),
- **BF (TI)*** – Բերթելսմանի հիմնադրամ, «Տրանսֆորմացիայի ինդեքս - 2022» (Bertelsmann Stiftung Transformation Index 2022)[5],
- **EIU** – Էկոնոմիստ Ինթելիջենս Յունիթ, «Երկրի ռիսկայնության վարկանիշ - 2021» (Economist Intelligence Unit Country Risk Service 2021),
- **FH*** – Ֆրիդոմ Հաուս, «Անցումային փուլում գտնվող պետություններ - 2021» (Freedom House Nations in Transit 2021)[6],
- **GI*** – Գլոբալ Ինսայթ, «Գործարար միջավայրի և ռիսկերի ցուցանիշներ – 2020» (Global Insights Business Conditions and Risk Indicators 2020)[7],
- **IMD** – Մենեջմենթի զարգացման ինստիտուտ, «Համաշխարհային մրցունակության տարեգիրք - 2021» (Institute for Management Development (IMD) World Competitiveness Yearbook 2021),
- **PERC** – Քաղաքական և տնտեսական ռիսկի խորհրդատվություն, «Ասիական հետազոտական-վերլուծական տեղեկագիր - 2021» (Political and Economic Risk Consultancy 2021),
- **PRS*** – Փոլիթիքլ Ռիսքս Սերվիսիզ Ինթերնեյշնլ, «Երկրի ռիսկայնության ուղեցույց - 2021» (The PRS Group International Country Risk Guide 2021)[8],

---

[3] Ավելի մանրամասն՝ https://transparency.am/storage/CPI2021_faq_am.pdf, էջ 3:
[4] Աստղանիշով ներկայացված են այն 6 աղբյուրները, որոնք օգտագործվել են Հայաստանի 2021թ. ԿԸԻ-ի հաշվարկման համար:
[5] Տվյալները հավաքագրվել են 2021թ հունվար-հունիս ամիսների ընթացքում:
[6] Տվյալները հավաքագրվել են 2020թ. հունվար-դեկտեմբերի ամիսների ընթացքում:
[7] Տվյալները հավաքագրվել են 2020թ. ընթացքում:
[8] Տվյալները հավաքագրվել են 2020թ. սեպտեմբերից 2021թ. օգոստոսն ընկած ժամանակահատվածում իրականացված եռամսյակային գնահատումների ընթացքում:

- **WB** – Համաշխարհային բանկ, «Երկրի հանրային քաղաքականության և ինստիտուցիոնալ համակարգի գնահատում - 2020» (World Bank Country Policy and Institutional Assessment 2020),
- **VDEM*** – «Ժողովրդավարության բազմազանության ծրագիր - 2021» (Varieties of Democracy Project 2021)[9],
- **WJP** – Արդարության համաշխարհային ծրագիր, «Օրենքի գերակայության ինդեքս - 2020» (World Justice Project Rule of Law Index 2021),
- **WEF*** – Համաշխարհային տնտեսական համաժողով, «Ընկերությունների գործադիր տնօրենների կարծիքի ամենամյա հարցում - 2020» (World Economic Forum Executive Opinion Survey 2020)[10]:

բ) Ստացված տվյալները (ենթաինդեքսները) ստանդարտացվում են: Ընդ որում, ստանդարտացումը կատարվում է 0-ից 100 միջակայքում՝ տվյալների նորմավորման միջոցով: Նորմավորումն իրականացվում է այնպիսի մեթոդաբանությամբ, ինչը թույլ է տալիս ապահովել տարբեր տարիների ԿԸԻ-ների համադրելիությունը[11]:

գ) Հաշվարկվում է ԿԸԻ-ն՝ որպես ենթաինդեքսների միջին: Նշենք, որ տվյալ երկրի ԿԸԻ-ն հաշվարկելու համար անհրաժեշտ պայման է առնվազն 3 աղբյուրից ստացված գնահատումների առկայությունը: Երկրի ԿԸԻ-ի միավորն այնուհետև հաշվարկվում է որպես այդ երկրի համար հասանելի բոլոր ստանդարտացված ենթաինդեքսների միջին թվաբանական: Ինդեքսի միավորները կլորացվում են ամբողջ թվերի:

դ) Հաշվարկվում է ԿԸԻ-ի անորոշության աստիճանը: Յուրաքանչյուր երկրի ԿԸԻ-ի համար հաշվարկվում է միավորի ստանդարտ սխալի չափը և դրա հիման վրա՝ վստահության միջակայքը, ինչը թույլ է տալիս արտացոլել ԿԸԻ-ի ստացման հիմքում ընկած տվյալների տատանողականությունը: Որքան փոքր է ստանդարտ սխալի չափը, այնքան ավելի «նեղ» է ստացվում վստահության միջակայքը, ինչն էլ ինքնին ենթադրում է պետական հատվածում կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ ընկալումների ավելի ցածր անորոշություն:

---

[9] Տվյալները հավաքագրվել են 2020թ. ընթացքում:
[10] Տվյալները հավաքագրվել են 2020թ. փետրվար-հուլիս ամիսների ընթացքում:
[11] Նորմավորման գործընթացի վերաբերյալ մանրամասները տե՛ս հետևյալ հղումով՝ https://bit.ly/3AIafQB, էջ 3:

2. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

2021թ. ԿԸԻ-ի արդյունքները ցույց են տալիս, որ լավ պաշտպանված քաղաքացիական և քաղաքական ազատություններ ունեցող երկրները հիմնականում ավելի լավ են վերահսկում կոռուպցիան: Այսպես, այս տարի 180 երկրների շարքում առաջատարներն են Դանիան, Ֆինլանդիան և Նոր Զելանդիան՝ յուրաքանչյուրը 88 միավորով: Լավագույն տասնյակը եզրափակում են Նորվեգիան, Սինգապուրը, Շվեդիան՝ 85-ական միավորով, Շվեյցարիան՝ 84 միավորով, Նիդեռլանդները՝ 82 միավորով, Լյուքսեմբուրգը՝ 81 միավորով և Գերմանիան՝ 80 միավորով:

Սիրիան, Սոմալին՝ 13-ական միավորով և Հարավային Սուդանը՝ 11 միավորով շարունակում են մնալ ինդեքսի վերջին հորիզոնականներում: Զինված հակամարտության մեջ ներքաշված, ինչպես նաև ավտորիտար երկրները հակված են ամենացածր միավորները վաստակել. այդպիսի երկրների շարքում են Թուրքմենստանը, Հասարակածային Գվինեան, Լիբիան, Աֆղանստանը, Հյուսիսային Կորեան, Եմենը և Վենեսուելան: Վերջիններս լրացնում են 2021թ. վատագույն տասնյակը:

Ընդհանուր առմամբ, ԿԸԻ-ի 2021թ. արդյունքները փաստում են, որ կոռուպցիայի նկատմամբ վերահսկողությունը վերջին տասնամյակում լճացել կամ վատթարացել է ինդեքսի հաշվարկներում ներառված երկրների 86%-ում: Ընդ որում, երկրների ավելի քան երկու երրորդի մոտ (68%) ԿԸԻ-ն ցածր է 50 միավորից, իսկ համաշխարհային միջինը շարունակում է մնալ 43 միավոր: 2012 թվականից ի վեր 25 երկրներ զգալիորեն բարելավել են իրենց միավորները, սակայն նույն ժամանակահատվածում 23 երկրներ նկատելիորեն վատթարացրել են իրենց դիրքերը:

Գծապատկեր 1. 2012-2021թթ. ընթացքում ԿԸԻ-ի փոփոխությունները, երկիր



Ծանոթագրություն. Ցանկում ներառված են բոլոր այն 179 երկրները, որոնք 2012-2021թթ. ժամանակահատվածում ներգրավված են եղել ԿԸԻ-ի հաշվարկներում:

3. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2021 թվականին Հայաստանը կոռուպցիայի ընկալման ինդեքսով աշխարհի 180 երկրների շարքում 49 միավորով զբաղեցրել է 58-րդ հորիզոնականը՝ այն կիսելով Հունաստանի, Հորդանանի և Նամիբիայի հետ: Նկատենք, որ թեև 2020-ի համեմատ 2021-ին Հայաստանը 2 հորիզոնականով բարելավել է իր դիրքերը, այդուհանդերձ ինդեքսի գնահատականի փոփոխություն տեղի չի ունեցել (Գծապատկեր 2):

Հիմնվելով փորձագետների և գործարարների շրջանում պետական հատվածի կոռումպացվածության վերաբերյալ ընկալումների վրա՝ ԿԸԻ-ն ըստ էության նկարագրում է վերջիններիս սպասումները՝ կառավարության կողմից կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստում: Սրանով կարելի է բացատրել 2018-2020թթ. ընթացքում ինդեքսի աճի միտումները՝ պայմանավորված 2018թ. իշխանափոխությունից հետո հասարակության շրջանում ձևավորված դրական ակնկալիքներով:

2021թ. արդյունքները խոսում են այն մասին, որ հետիշխանափոխական շրջանում գրանցված դրական սպասումներն այժմ սառեցվել են, և առաջիկա տարիներին ինդեքսը ցույց կտա, թե որքանով է հաջողվել կոռուպցիայի դեմ պայքարում հասնել համակարգային փոփոխությունների: Այս պահի դրությամբ, թերևս, համակարգային փոփոխությունները շարունակում են բաց մնալ: Ընդ որում, Թրանսփարենսի Ինթերնեյշնլի զեկույցում այս մասին հատուկ անդրադարձ է կատարվել: Զեկույցում մասնավորապես նշվում է, որ չնայած առաջընթացին, կոռուպցիայի դեմ պայքարի բարեփոխումների օրակարգը վերջին մեկ տարում կանգ է առել, և ՀՀ կառավարությունը պետք է վերստին հանձնառի այս ուղղությամբ անհրաժեշտ քայլերի շարունակականության ապահովումը:

Գծապատկեր 2. ԿԸԻ-ն Հայաստանում և ՀՀ դիրքն ըստ ԿԸԻ-ի, 2012-2021թթ.



Հայաստանում ԿԸԻ-ն ձևավորող առանձին ենթաինդեքսների մասով նկատենք, որ 2021-ին 2020-ի համեմատ 4 միավորով վատթարացել է VDEM (Varieties of Democracy Project) ենթաինդեքսը, 6 միավորով բարելավվել է WEF EOS (World Economic Forum Executive Opinion Survey) ենթաինդեքսը, իսկ մնացած 4 ենթաինդեքսների մասով փոփոխություն չի գրանցվել: Ընդ որում, մտահոգիչ է VDEM-ի մասով գրանցված հետընթացը, որն արտահայտում է իշխանության տարբեր ճյուղերում (գործադիր, օրենսդիր և դատական) քաղաքական կոռուպցիայի առկայության աստիճանը:

Աղյուսակ 1. ԿԸԻ-ի բաղադրիչները ՀՀ-ում, 2016-2021թթ.

Տարի/Ցուցանիշ	Կոռուպցիայի ընկալման ինդեքս		BF (TI)	FH	GI	PRS	VDEM	WEF EOS
	Դիրք	Ինդեքս						
2016	113	33	28	41	34	32	17	45
2017	107	35	33	42	35	32	20	47
2018	105	35	33	39	35	32	21	51
2019	77	42	45	39	47	32	32	60
2020	60	49	45	44	47	32	63	60
2021	58	49	45	44	47	32	59	66

Ծանոթագրություն. Աղյուսակում ներկայացված հապավումներն ունեն հետևյալ բովանդակությունը. BF (TI)՝ Bertelsmann Foundation Transformation Index, FH՝ Freedom House Nations in Transit, GI՝ Global Insights Country Risk Ratings, PRS՝ Political Risks Services International Country Risk Guide, VDEM՝ Varieties of Democracy Project, WEF EOS՝ World Economic Forum Executive Opinion Survey:

4. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Ուսումնասիրության այս մասում կներկայացնենք ԿԸԻ-ի և վարկանիշային աղյուսակներում դրա դիրքի առնչությամբ Հայաստանի համեմատականները տարածաշրջանային կտրվածքներով:

Այսպես, Գծապատկեր 3-ում ներկայացված են Թրանսփարենսի Ինթերնեյշնլի կողմից աշխարհի 6 տարածաշրջաններում 2021 թվականին գրանցված ԿԸԻ-ի միջին գնահատականները և Հայաստանի միավորը: Արևմտյան Եվրոպան և Եվրոպական միությունը 66 միավորով շարունակում է գլխավորել ԿԸԻ-ն, սակայն վերջին տարիներին տարածաշրջանում առաջընթացը նվազել է: Համաձայն զեկույցի՝ ԿՈՎԻԴ-19 համավարակը վտանգել է պետական հատվածի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը ողջ տարածաշրջանում՝ բացահայտելով կոռուպցիայի դեմ պայքարի բնագավառում հետընթացի մտահոգիչ նշաններ նույնիսկ տարածաշրջանի առաջատարների շրջանում: Նախորդ տարիների համեմատ չգրանցելով նշանակալի բարելավումներ՝

Անդրսահարյան Աֆրիկայի տարածաշրջանը 33 միավորով շարունակում է զբաղեցնել վատագույն դիրքը:

Նկատենք, որ Հայաստանն իր միավորով զբաղեցնում է Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի (որտեղ ներառված է նաև Հայաստանը) միջին գնահատականից բարձր դիրք:

Գծապատկեր 3. ԿԸԻ-ի արժեքները ՀՀ-ում և աշխարհի տարբեր տարածաշրջաններում, 2021թ.



Ինչպես պարզ է դառնում Աղյուսակ 2-ից, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրների լավագույն եռյակը 2021-ին գլխավորում են Լիտվան (61 միավոր), Լատվիան (59 միավոր) և Սլովենիան (57 միավոր)՝ համաշխարհային սանդղակում համապատասխանաբար զբաղեցնելով 34-րդ, 36-րդ և 41-րդ հորիզոնականները: Վատագույն արդյունքները գրանցել են Ղրղզստանը (27 միավոր), Տաջիկստանը (25 միավոր) և Թուրքմենստանը (19 միավոր)՝ 180 երկրների շարքում զբաղեցնելով համապատասխանաբար 144-րդ, 150-րդ և 169-րդ հորիզոնականները: Տարածաշրջանում ԿԸԻ-ի ամենամեծ բարելավումը 2020-ի համեմատ 2021-ին գրանցել է Հյուսիսային Մակեդոնիան (4 միավորով), իսկ ԿԸԻ-ի ամենամեծ նվազումը գրանցել է Բելառուսը (6 միավորով): Նկատենք նաև, որ Հայաստանը, ինչպես 2020-ին, այնպես էլ 2021-ին ԿԸԻ-ով հետ է մնում առաջատար եռյակից, Լեհաստանից, Վրաստանից և Չեխիայից՝ տարածաշրջանում զբաղեցնելով 7-րդ հորիզոնականը:

Աղյուսակ 2. ԿԸԻ-ի արժեքները ՀՀ-ում և Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրներում, 2020-2021թթ.

Երկիր	ԿԸԻ 2021	ԿԸԻ 2020	Փոփոխությունը	Դիրք 2021	Դիրք 2020	Փոփոխությունը
Լիտվա	61	60	1	34	35	-1
Լատվիա	59	57	2	36	42	-6
Սլովենիա	57	60	-3	41	35	6
Լեհաստան	56	56	0	42	45	-3
Վրաստան	55	56	-1	45	45	0
Չեխիա	54	54	0	49	49	0
Հայաստան	**49**	**49**	**0**	**58**	**60**	**-2**
Խորվաթիա	47	47	0	63	63	0
Մոնտենեգրո	46	45	1	64	67	-3
Ռումինիա	45	44	1	66	69	-3
Հունգարիա	43	44	-1	73	69	4
Բուլղարիա	42	44	-2	78	69	9
Բելառուս	41	47	-6	82	63	19
Կոսովո	39	36	3	87	104	-17
Հս. Մակեդոնիա	39	35	4	87	111	-24
Թուրքիա	38	40	-2	96	86	10
Սերբիա	38	38	0	96	94	2
Ղազախստան	37	38	-1	102	94	8
Մոլդովա	36	34	2	105	115	-10
Ալբանիա	35	36	-1	110	104	6
Բոսնիա և Հերցեգովինա	35	35	0	110	111	-1
Ուկրաինա	32	33	-1	122	117	5
Ադրբեջան	30	30	0	128	129	-1
Ռուսաստան	29	30	-1	136	129	7
Ուզբեկստան	28	26	2	140	146	-6
Ղրղզստան	27	31	-4	144	124	20
Տաջիկստան	25	25	0	150	149	1
Թուրքմենստան	19	19	0	169	165	4

Ինչպես 2020-ին, այնպես էլ 2021-ին ԵԱՏՄ անդամ երկրների հետ համեմատության մեջ Հայաստանը շարունակում է ԿԸԻ-ով զբաղեցնել առաջատար դիրքեր: Երկրորդ տեղում Բելառուսն է (41 միավոր), երրորդ հորիզոնականում՝ Ղազախստանը (37 միավոր), չորրորդում՝ Ռուսաստանը (29 միավոր) և հինգերորդ հորիզոնականում՝ Ղրղզստանը (27 միավոր): Ընդ որում, բացի Հայաստանից, ԵԱՏՄ անդամ մյուս երկրները 2020-ի համեմատ 2021-ին գրանցել են անկումային

արդյունքներ՝ ինչպես ԿԸԻ-ի, այնպես էլ աշխարհում զբաղեցրած դիրքի առումով (Գծապատկեր 4):

Գծապատկեր 4. ԿԸԻ-ին ԵԱՏՄ երկրներում, 2019-2021թթ.



Կոռուպցիայի ընկալման մասով 2021թ. արդյունքներով հարևան երկրների շրջանում Հայաստանը շարունակում է զիջել միայն Վրաստանին, որի ԿԸԻ-ն կազմում է 55 միավոր՝ 6 միավորով գերազանցելով Հայաստանի ցուցանիշին: Երրորդ հորիզոնականը 38 միավորով զբաղեցնում է Թուրքիան, որը ԿԸԻ-ով Հայաստանից հետ է մնում 11 միավորով: Ադրբեջանը 30 միավորով զբաղեցնում է չորրորդ հորիզոնականը, իսկ Իրանը 25 միավորով եզրափակում է տարածաշրջանային սանդղակը: Վերջիններս ԿԸԻ-ով Հայաստանից հետ են մնում համապատասխանաբար 19 և 24 միավորով: Նկատենք նաև, որ 2021-ին միջազգային վարկանիշային աղյուսակում Վրաստանը Հայաստանից առաջ է 13 հորիզոնականով, իսկ Թուրքիան, Ադրբեջանը և Իրանը Հայաստանից հետ են մնում համապատասխանաբար 38, 70 և 92 հորիզոնականով (Գծապատկեր 5):

Գծապատկեր 5. ԿԸԻ-ին ՀՀ-ում և հարևան երկրներում, 2019-2021թթ.



Աղյուսակ 3-ը հուշում է, որ վատագույն արդյունքը 2021 թվականին գրանցել է Թուրքիան, որի ԿԸԻ-ն նախորդ տարվա համեմատ նվազել է 2 միավորով, ինչի հետևանքով վերջինիս դիրքն աշխարհում վատթարացել է 10 հորիզոնականով: ԿԸԻ-ն 2021-ին նվազել է նաև Վրաստանում (1 միավորով), սակայն միջազգային վարկանիշային աղյուսակում դիրքային փոփոխություն տեղի չի ունեցել: Ադրբեջանում և Իրանում, թեև նախորդ տարվա համեմատ 2021-ին ԿԸԻ միավորի փոփոխություն տեղի չի ունեցել, վերջիններս այլ երկրների համեմատ որոշակիորեն կորցրել են մրցակցային առավելությունը՝ համապատասխանաբար 2 և 1 հորիզոնականով վատթարացնելով իրենց դիրքն աշխարհում:

Աղյուսակ 3. ԿԸԻ-ի արժեքների և հորիզոնականների փոփոխությունը ՀՀ-ում և հարևան երկրներում, 2019-2021թթ.

Երկիր	ԿԸԻ			ԿԸԻ փոփոխությունը		ԿԸԻ հորիզոնական			ԿԸԻ հորիզոնականի փոփոխությունը	
	2019	2020	2021	2019-2020	2020-2021	2019	2020	2021	2019-2020	2020-2021
Վրաստան	56	56	55	0	-1	44	45	45	-1	0
Հայաստան	42	49	49	7	0	77	60	58	17	2
Թուրքիա	39	40	38	1	-2	91	86	96	5	-10
Ադրբեջան	30	30	30	0	0	126	126	128	0	-2
Իրան	26	25	25	-1	0	146	149	150	-3	-1

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով 2021 թվականին աշխարհում և Հայաստանում Կոռուպցիայի ընկալման ինդեքսի վերաբերյալ վերլուծությունը, կարող ենք նշել, որ.

- 2021թ. արդյունքներով պետական հատվածում կոռուպցիայի հարաբերական աստիճանը խորացել է ողջ աշխարհում՝ արտացոլելով ԿՈՎԻԴ-19 համավարակի հետևանքով կառավարությունների թափանցիկության և հաշվետվողականության գործառույթների վտանգվածությունը: Միևնույն ժամանակ, լրջագույն խոչընդոտներ են ստեղծվել մարդու իրավունքների և ժողովրդավարական այլ ինստիտուտների գործարկման համատեքստում:
- Ինդեքսի հաշվարկներում ներառված 180 երկրներից ավելի քան երկու երրորդը գրանցել է 50-ից ցածր միավոր, իսկ համաշխարհային միջին գնահատականը շարունակում է մնալ 43 միավոր: Ընդհանրապես, վերջին տասնամյակում կոռուպցիայի նկատմամբ վերահսկողությունը լճացել կամ վատթարացել է երկրների 86%-ի մոտ:
- 2021 թվականին 180 երկրների շարքում ԿԸԻ-ի ամենաբարձր ցուցանիշները գրանցել են Դանիան, Ֆինլանդիան և Նոր Զելանդիան, որոնք 88-ական միավորով կիսում են առաջին հորիզոնականը: Վատագույն արդյունքը գրանցել է Հարավային Սուդանը՝ 11 միավորով զբաղեցնելով վերջին հորիզոնականը:
- Միջազգային վարկանիշային աղյուսակում Հայաստանը 2021 թվականին զբաղեցրել է 58-րդ հորիզոնականը՝ նախորդ տարվա համեմատ 2 հորիզոնականով բարելավելով իր դիրքը:
- Չնայած դիրքային առաջընթացին՝ 2021-ին Հայաստանը պահպանել է ԿԸԻ-ի նախորդ տարվա գնահատականը՝ 49 միավոր, ինդեքսի բարելավում տեղի չի ունեցել: Ընկալումների համատեքստում սա առաջին հերթին նշանակում է, որ պետական հատվածում առկա կոռուպցիոն երևույթների կանխարգելման հանձնառության մասով ՀՀ կառավարության հանդեպ փորձագիտական և գործարար շրջանակներում ձևավորված վերջին տարիների դրական սպասումները կանգ են առել:
- Մտահոգիչ է, որ 2021-ին 2020-ի համեմատ 4 միավորով վատթարացել է VDEM ենթաինդեքսի գնահատականը, որն արտահայտում է իշխանության տարբեր ճյուղերում (գործադիր, օրենսդիր և դատական) քաղաքական կոռուպցիայի առկայության աստիճանը: Վերջինս խոսում է նաև այն մասին, որ պետական հատվածում առկա կոռուպցիայի դեմ պայքարի համակարգային փոփոխությունները Հայաստանում շարունակում են բաց մնալ:

- 2021 թվականին Հայաստանը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային վարկանիշային աղյուսակում 2020-ի համեմատ դիրքային բարելավում չի գրանցել և շարունակում է զբաղեցնել 7-րդ տեղը:
- ԵԱՏՄ պետությունների շարքում Կոռուպցիայի ընկալման ինդեքսով ինչպես 2020-ին, այնպես էլ 2021-ին Հայաստանը շարունակում է զբաղեցնել առաջատար դիրքը, որին հաջորդում են համապատասխանաբար Բելառուսը (41 միավոր), Ղազախստանը (37 միավոր), Ռուսաստանը (29 միավոր) և Ղրղզստանը (27 միավոր):
- ԿԸԻ-ի գնահատականներով 2021 թվականին Հայաստանը շարունակում է հարևան երկրների շարքում զիջել միայն Վրաստանին (55 միավոր), որն աշխարհում զբաղեցրած դիրքով Հայաստանից առաջ է 13 հորիզոնականով: Թուրքիան, Ադրբեջանը և Իրանը 2021թ. գնահատականներով ստացել են համապատասխանաբար 38, 30 և 25 միավոր: Ընդ որում, միջազգային վարկանիշային աղյուսակում Թուրքիան Հայաստանից հետ է մնում 38 հորիզոնականով, Ադրբեջանը՝ 70 հորիզոնականով, իսկ Իրանը՝ 92 հորիզոնականով:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*